- ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Ռանչպար գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝

ա/ իրականացնում է նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը,

բ/ պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար,

գ/ պատասխանատու է հաստատություն հաճախող սաների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար,

դ/ լիազոր մարմին է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը,

ե/ կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը,

զ/ լիազոր մարմնի հավանությանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական ուսումնական զարգացման ծրագիրը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված ձևաչափի և պահանջների համաձայն,

է/ իրականացնում է օրենքով և նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի՝

1.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա/ բարձրագույն կրթություն

բ/ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/,

գ/ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

դ/ տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն/ ՀՀ Սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/:

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

ա/տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

բ/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ/աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,

ե/ ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,

զ/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի, այն անձը, ով՝

ա/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ/տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդությունների որևէ մեկով,

գ/ օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն,

դ/ դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

զ/ զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել,

է/ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26 մարտի 2020 թվականի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են,

զ/ 65 տարին լրացած քաղաքացիները:

* Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 14-ին՝ ժամը 12:00-ին, Մասիսի համայնքապետարանի շենքում/ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 /:

* Դիմումները ներկայացնել Մասիսի համայնքապետարանի վարչական շենք, հասցե՝ Կենտրոնական հրապարակ թիվ 4, 4-րդ հարկ, 415 աշխատասենյակ, քարտուղաարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն: Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում.
- Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- Քաղվածք աշխատանքային գրքույկի կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/.
- Ինքնակենսագրություն.
- Անձնագիր, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- Տեղեկանք մշտական բնակության վայրից.
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ, անձը հաստատող փաստաթղթով: